



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

7-52



554

891.99  
752

1-00000 2014

Handwritten notes in Armenian script on the left side of the book cover.

Handwritten mark or symbol at the top center.

© Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

# ԽՈՂԵ ԵՒ ՅՈՒՇԳ

1903



ՎԻՆՆԵԱ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1904.

1001  
3409

22.07.2013


51070

3550

ՀԷՔ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՍԻՐԵԼԻՈՅՆ

ՊԱՇՏԵԼԻ ՑԻՇԱՏԱԿՈՎ

///  
///





Տիկին Զարուհի Ռ. Պերպերեան  
† 1899 Մարտ 12  
1886ին լուսանկարուած :



Ռ. Յ. Պերպերեան  
1886ին լուսանկարուած :

ԽՈՂԸ ԵՒ ՅՈՒՇԸ

Ա.

Խորհի՛ւ, յիշի՛ւ, աստուածայի՛ն պարգեւներ  
Թէ չար ոգւոյ մ'առ մարդ նենգո՛տ ժանտ նուէր:  
Խորհի՛ւ անանցն անցաւորին տակ գտնել,  
Յիշի՛ւ անցեալն իր թռչին մէջ կեցընել:  
Պարգեւ վըսնմ', որ տիեզերքն ու դարեր  
Մարդուն գանկին մէջ ցոլացիկ է դրեր.  
Բայց եւ գործի չարչարանաց, հհ, այդ ձօն.  
Միտքը հրգօր, սիրտը տըկար, քանի՛օն  
Մարդն որ խորհի, մարդն որ յիշէ՛ վշտակրի,  
Ծախանձաքեկ անշունչ փայտի ու քարի:  
Ծախատեսած պատկերը մահ կ'սպառնայ,  
Անցելոյն յուշ դառնաթոյն խոց կը դառնայ....:

ՃԵ



Ք.

Երջանկութեան երազըս չէր պահանջկոտ.  
 Չէի ինդրեր պատուոյ տիտղոս յաւակնոտ,  
 Ոսկեայ ձեղուն գլխուս վերել, ոտքիս տակ  
 Թանկագին գորգ, շուրջըս առած շարունակ  
 ծառայներու դասակ հըլու, եւ շքոյլ  
 Շուք ու սեղան, ելմուտ հանդէս պերճափայլ:  
 Ո՛չ, այլ համեստ երջանկութիւնն ամիւսնոյ,  
 Կենաց ընկեր կընոջ ժրպիտը սիրոյ,  
 Մէկտեղ քաժնուած որդւոց հոգն ու գորովանք,  
 Մէկտեղ քաժնուած կենաց հաճոյքն ու տա-  
 ժանք:  
 — Տըւիր ինձ գայն, քայց էր խլեցիր, ո՛վ երկին,  
 Անգութ ձեռքով փակելով դուռն ինձ դրախ-  
 տին:



Գ.

Ամեր յառաջ սարսուռ պատեց իմ հոգիս  
 Ու արեւուն շիջաւ արդէն լոյսն աչքիս,  
 Հորիզոնիս վըրայ, իբրեւ ամպ խաւար,  
 Մեծ աղետին երբ կանգնեցաւ գաղափար.  
 Մինչ խոով քունիս մէջ քստմտելով գլխուս հեր՝  
 Ուրուականին զիս հալածէր մութ պատկեր.  
 Գարուններուն նոր խոտն արցոնքըս թրջէր՝  
 Սեւ կասկածով թէ հուսկ նըւագ գայն կոխէր,  
 Ու իր մարմնոյն, ձայնին աւերն ամեցուն  
 Ահեղ գուժկանն էր մերձեցման ժանտ ժամուն:  
 Բայց երբ հնչեց, ինձ հընար չէր համոզուիլ.  
 Մըռընչեցի. «Ի՞նչպէս կրնար նա մեռնիլ:»,





Զ.

Ժամանակը չէր ստնաներ մեր սիրոյն.  
 Վարժութիւնը գայն կը գործէր քաղցրագոյն.  
 Սիրոյ յուշեր ժառանգելով իրարմէ՝  
 Սիրահարուստ կ'ըլլային ամբ մէկմէկէ:  
 Սո՛ւտ է սիրոյ դամբան կոչել ըզհիմէն,  
 Կամ այդպիսիք զիրար երբեք սիրած չեն:  
 Սիրահարի շեշտը պահէր մեր քարքառ,  
 Թէ եւ մեր շուրջն առած ըլլար մանկանց պար.  
 Մեր շուրթ շնչէր նոյն անթառամ ծաղկանց  
 քոյր,  
 Ու նոյն մեղրի նեկտարն էր միշտ մեր համբոյր:  
 Ա՛հ, աչքիս մէջ հալեցան հուսկ իր նայուած.  
 Հոգիս իր հետ նա գերեզմանն է տարած:



Է.

Օտար երկնից տակ էր. պարտէզ մ'էր հեշտին.  
 Վերջալուսոյ կը վառէին շողք յետին,  
 Շոճիներուն ոսկեգօծած վեր գազաթ,  
 Ու հեռուէն Ալպեանց ցոլար ծին ճակատ:  
 Զըւարթ քաղքին բընակիչներ երջանիկ  
 Հոն ձեմ՝ առնուլ գային խումբ խումբ տո-  
 դանցիկ,  
 Ցուցադրելով գեղեցկութեանց հրմայք բիւր,  
 Ծուազուն խազեր մինչ ցանէր յօղըս գեփիւռ:  
 Ահա՛ մի գոյգ անցաւ պառուած ամուլից.  
 Ես, նախագգած քախտի նետին թունալից,  
 Ըսաւ տրխուր, հայեցուածքով մ'արցունքոտ,  
 „Տես թէ ինչի պիտ' լինէի նախանձոտ:„



## Թ.

Ի՛նչ գեղեցիկ է փոռագական այն զորոյց  
 Զոր մեզ բերթողն Այլակերպման<sup>1</sup> սովորե-  
 ցոյց: —

Բարեպաշտիկ Փիլեմոնը եւ Բաւկիս,  
 Միմեանց սիրոյն մէջ խոնարհած ի ծեր տիս,  
 Երբոր, ի վարձ առ դիս իրենց յարգանքին,  
 Արամազդէն իղծ մը յայտնել կը կոչուին,  
 Խնդրեն չտեսնել յետին ժամը մէկմէկու,  
 Ո՛չ մին միւսին մահուանն ըլլալ ողբերգու.  
 Եւ երբ, լըսուած, կ'ապրին ամօք աղաղծուն,  
 Տերեւտ ճիւղ կ'արձակեն զերդ ծառոց բուն.  
 Թմբի կ'ըլլայ կինն ու այրը՝ սէգ կաղնի,  
 Իրենց հասակ քովքովի միշտ կը կանգնի . . . :

<sup>1</sup> Ովիզիոս:



## Պ.

Զորոյց ու վէպ — իրաւացի է ըսել —  
 Քան պատմութիւն ճշմարիտ են առաւել.  
 Պատահարներն այս մեզ պատմէ, ու նոքա  
 Մարմնացըներն յոյզ կամ՝ տեսիլն յարակայ:  
 Քաղցրագոյնը երագներուն ամուլից,  
 Ահեղագոյնն երկիւղներուն այդ սրտից,  
 Ամայութիւնն այրիացած հէք հոգւոյն,  
 Միտքն որ հողի կոյտի մը կայ սեւեռուն՝  
 Մեզ Բաւկիսն ու Փիլեմոն չն՛ն ցոյց տար,  
 Աղկեստին զոհն, Որփեայ քընարն անմխիթար,  
 Յիշատակն հաւատարիմն Անդրոմաք,  
 Այրին զոր յար կ'այրէ անշէջ մի կըրակ:



Մ.

Ժողովուրդի ղեկավարները վերջն երբ ճամբորդ  
 Լերկ քարքարուտ հասնի ուղույ խորտուփորտ,  
 Ոտքն աւելի սուր կոշկոճեն քարն ու փուշ:  
 Երբ սրբահին մէջ կը մարի ջահից լոյս,  
 Ա՛լ եւրս ցուրտ ու թանձրամած է խաւար,  
 Եւ լրուլթին կը ճնշէ ծանր, երբ դադար  
 Անուն յառաջ հընչող երգերն անուշակ:  
 Այսպէս անցած քաղցր օրերուն յիշատակ  
 Դժնէագոյն կ'ընէ ցաւը ներկային,  
 Հեզնող ժրպիտ, անագորոյն, դառնագին,  
 Իբրեւ փայլակ սարից վերել, որ ի վեր,  
 Ա՛լ պակուցիչ, հանէ ծրփուն սեւ վիհեր:



ՄԱ.

Երբ ներկային հակապատկերն է անցեալ,  
 Ու լոյս երկինքն է որ դըժոխք դարձեր աւ,  
 Երբ մեղր հոսող աղբիւրն ինքն է որ այսօր  
 ծոցէն թոխէ արին արցունք մշտածոր,  
 Երբ սիրանոյշ աղուոր դէմքն ինքն է որ, ախ,  
 Վընէն քեզ ցոյց կուտայ դիմակ մը կըմախ,  
 Երբ գրկաց տեղ քնքոյշ էակն արդ ունի  
 Հողէ մահի՞ծ ուր կըծէ իրող զանի,  
 Եւ երբ երէկն էր դրախտ համակ երգ, ժրպիտ,  
 Ու այսօրն է ցաւոց տրտում՝ լուռ հովիտ,  
 Ո՛չ Միւսէին, քու վճիռդ, Տանդէ, է իրաւ.  
 “Չուտաւ աւուրց մէջ քան քաստից յուշ չիք գէշ



“ցաւ:”

**ՎՔ.**

Գիցազնուհիքն որպէս հելէն Ողբերգին,  
 Իփիգենիսն, Աստիգոնէ քաղցրոգին,  
 Ասպարտ զոհեր, երբոր ի մահ կ'երթային,  
 Հեգամաշիկ տըխուր ողբով մը լային  
 Գեղեցիկ լոյսն երկնից շքեղ արեւուն  
 Որ պիտ' պակսէր ընդհուպ իրենց բիբերուն:  
 Այսպէս եւ նա, վերջաբունսն իւր ներկայ,  
 Սարսոտոտ հեծքով տեսնէր մութը որ կուգայ: —  
 Արհաւիրքն, ո՛հ, զոր մանկամարդ էակին,  
 Աղուոր, օժտուած, անուշից մայր, պաշտուած  
 կին,  
 Տայ տեսքն անսիրտ, սեւ, սառուցիկ ստուերին  
 Որ գայ գողնալ իրմէ լոյս, սէր կաթոգին . . .:



**ՎԳ.**

Կողկողելով, աղէկեզիկ, կ'ողբերգէր.  
 «Ի՛նչ երջանիկ էինք. ոչինչ ինձ պակսէր.  
 Սիրուած ընկեր, սիրուն անուշ զաւակներ,  
 Սրտիս ամէն ուզածն երկինք ինձ տըւեր:  
 Ինչո՞ւ յանկարծ կ'ոխերմանայ մեզ անող,  
 Ու չ'ողորմիր այս հէք մանկանց ալ անմող.  
 Մեր պայծառ տիւն է՞ր մըթագնի այսքան շուտ.  
 Մայր ըլլալ, անխ, ու մեռնիլ վա՛ղ, բանխ  
 անգուլծ:  
 Ո՞ր մեղքերուս պատուհասն է, Աստուած իմ.  
 Թէ սէրն յանցանք է՝ զայդ միայն ես ունիմ,  
 Թէ ոչ երկինք ալ նախանձի երջանկին,  
 Կամ տառապանքն է միակ օրէնքն աշխարհ-  
 քին:»,



1001  
3409



ԺԳ.

Ո՛հ, Աստուած իմ, ամայութիւնը յարկին  
 Ուրկէ մեկնած է գայն լեցնող քաղցր հոգին: —  
 Տաճարն է այն, ոյր կործանած է խորան,  
 Ու ալ դադրած պաշտամանց կարգ սրբազան.  
 Վառարանն է ուր չի վառիր այլ եւս հուր,  
 Մարմինն է զոր կեանքը թողեր է թափուր:  
 Ու հոն համայն յիշատակ է տխրաբոյր,  
 Ամէն կէտէ արցունքի շիթ մ'իյնայ լուռ.  
 Հոն ամէն քան լի էր իրմով, ու հիմայ  
 Անշունչ իրք ալ թուին հարցնել «հըր է նա»,:  
 Շրջանակ մ'է տունն ոյր նըկարն է ինկեր.  
 Սեւը չորս դին սրտից սուգը գրծագրեր . . .:



ԺԿ.

Երկրի վըրայ քան ընտանեաց շրջանակ . . .  
 Չըկայ պատկեր յուզիչ, միգիչ, գեղունակ . . .  
 Երջանկութիւն ունի յաստիս թէ դադար, . . .  
 Այդ ակումբին մէջ միայն գտնելն էր հընար:  
 Սիրով յաւէտ այդ մթնոլորտն է ջերմին,  
 Ու հոն լոյսն է քղիում միմեանց նայուածքին.  
 Միմեանց շունչով խնկահոտ քոյր մ'է կազ-  
 մուեր,  
 Գորովանքի ալեաց մէջ լիւղ գան սրտեր:  
 Քնքոյշ քարքառ կ'ուղղեն շրթներն իրարու, . . .  
 Ու համքոյրը անոնց վըրայ թեւ կ'առնու.  
 Մէկմէկու մէջ կը թըրթըռան հոգիներ.  
 Ամենուն լարք նոյն խազուխ են դաշնակուեր:



Վ.Գ.

Հեռուն, հեռուն, ծրփուն մշշի մը մէջէն  
 Կը պատկերի հիմայ անցեալըս իմ դէմ,  
 Երանութեան տարտամ անուրջ խաբուսիկ,  
 Ոսկի կապոյտ քողի տակէն ցոլացիկ:  
 Աղօտագիծ հոն նշմարեմ իմ ստուեր,  
 Որ, սիրագմայլ, դէպ լոյս ոգի մ'է ծրուեր,  
 Որոյ ճիւն ծոցն իր վարդ այտին քարձ առած՝  
 Կը քննանայ հրրեշտակիկ մ'ստնդեաց:  
 Ես եմ, քայց ինձ ես կը թուիմ մի օտար.  
 Կնձոած իմ դէմք, ձերմկած իմ հերք, սիրտ  
 խաւար  
 Տանին ժպտուն պատկերն հեռուն, ալ հեռուն,  
 Ու արցունքի կ'իջնէ այտէս դառն առուն:



Վ.Է.

Բնութեան գրկին մէջ սիրէինք թափառիւ.  
 Աղուոր օրերն երբ դարձուցած էր Ապրիլ,  
 Երեկորի մեր պըտոյտներ տային ծայր,  
 Լեռ, ձոր, պուրակ, մինչեւ արեւ մտնէր մայր:  
 Երջանկաւէտ սիրոյ շունչովը թեթեւ,  
 Զոյր հոգիներ, կը թռչէինք թեւ ի թեւ.  
 Մեր սրտերուն ու այերց լոյս, քոյրն ու նուագ,  
 Միմեանց խառնուած, համերգ մ'էին ներդաշ-  
 նակ:  
 Մէն մի վայրկեան, գեղոյ՝ հմայքի նոր զևտ  
 մ'էր.  
 Համակ հիացում էինք, համայն խօսէր սէր...:  
 Էր տխրերանգ անապատ մ'է այժմ համայն:—  
 Սիրտն իր թոյրով կը տողորէ գամբայն:





**Վ.Է.**

Յաճախ մեզ քաղցր էր յամել ծայրոք բլրին,  
 Երբոր արդէն մութը կոխած էր գետին.  
 Իրերն ամէն ուրուախառնէր գորշ ստուեր,  
 Ու մի առ մի յերկինս աստեղոց աչք բացուէր:  
 Պահն այն ունէր մեզի համար գեղ մ'անհուն,  
 Պլպլուն ցոլից, տարտամ ձեւոց պահ խոհուն,  
 Ուր մեղմըլէր տակաւ տազնապար կեանքին,  
 Երբն ու երազ տենչային էք անձկագին:  
 Մութին ըզմեզ կ'զգայինք ալ միմեանց մօտ.  
 Սէրն՝ աստեղոց պէս՝ կ'առնուր թրթռում մը  
 ..... հերքոտ.  
 Ու քովէ քով, ձեռք ձեռքի մէջ, լուռ կայինք,  
 Անհունին դէմ անհուն սիրոյն խոկայինք:



**Վ.Թ.**

Կենսատենչիկ հէք աղանի նետահար,  
 Ետին թողած իր բոյն կ'երթար տար աշխարհ.  
 Ես քարափէն, նա վահօնէն կարկառուն,  
 Կայինք յիրեար պիշ, մինչ սուրար կառքն  
 ..... հեռուն:  
 Մեծ բաժանման նախամաշակն էր լեղի.  
 Մութին մէջ քար աղբիւր մ'էի արցունքի.  
 Յաւերն առած, փախչէր ան, մահ ի սրտին.  
 Դեկտեմբերի գեշեր մ'էր թաց ու ցրտին...:  
 Հորթ մ'էր տեսած կայարանի մը մօտիկ,  
 Որ «մօ», պոչէր, կորսնցուցած իր մայրիկ:  
 Ահ, մինչ Բարիզ նա խորհեր էր Եւրոհանին.  
 «Փորրիկն արդեօք մահօ՞ն՝ կ'ուզէ լալազին...»,  
 .....  
 \* Եւրոհան մահօ քառով կը կոչէր իր մահօն:



Ք.

Մարտըռալի տեսիլն աչքիս դէմս է միշտ.  
 Նոյն մետաքսեայ ճերմակ հանդերձն էր այն  
 ծիշտ,  
 Որով անշունչ մարմինն էին զարդարեր,  
 Եւ զոր, քաբէ՛, պըսակին տակն հագած էր:  
 Հիմայ, շիրմին լուռ խօսեցեալ, կը պառկէր,  
 Մեղրամոմի դալուկն իր դէմքը պատէր.  
 Դողողջ շուրթիս տակ ճակտին սանն գգացի,  
 Զայն չըկակղեց հուրն արցունքիս զոր լացի:  
 Վա՛շ. խնդալը յիմարութիւն չէ՛ միթէ. —  
 Հարսին կարածն իրեն պատահնք թէ զարդ է.  
 Ապագային ծոցն ինչ պատրանք մեզ պահուին.  
 Առագաստը մահուան մահի՛ժն է վաղուին . . . :



ՔԱ.

Խուլ Տառապանքն իմ՝ ընկերս է անմեկին,  
 Եորմէ հետէ փակեց աչուին արեւին,  
 Աչուին կըրակ, որ իմ՝ հոգւոյն խանդ տըւին;  
 Որոց շողը յաւէտ իմ՝ աչք խնդրեցին:  
 Հիմայ հոգիս իր ուրուին շուրջ գայ թափառ,  
 Փոսի մը մէջ միտքըս սուգի անդադար.  
 Առանց իրեն, դոյզն հաճոյք խայթ տայ խղճիս,  
 Ժըպիտն, անկազմ, ջնջուի վերայ իմ՝ դէմքիս,  
 Ամէն խոհի, տեսլի մէջէն զինք տեսնեմ՝,  
 Բայց ո՛չ ուրեք, ան, ո՛չ ուրեք զինք գտնեմ:  
 Պարապին մէջ, զոր ինք թողուց, սիրտս հալի,  
 Ու շիթ առ շիթ կեանքս արցունքի կը լուծուի:



ԽԻ.

Երեկոյին, ընթրիքէն վերջ, նա յամախ,  
 Երբ տըրոց քուն ըրած էր տունը խաղաղ,  
 Դաշնամուրին առջին կ'անցնէր կը նստէր,  
 Զի ստեղնաշարն; ո՛հ, գիտէին իր մատներ  
 Դիւթիչ շեշտով, խանդոտ սըրտին ըստ հաճոյս,  
 Թըրթոսացնել մերթ մեղմօրօր, մերթ կրայոյգ:  
 Երբեմն իր քով կ'ընթեռնուի, — շատ անգամ  
 Կը թողուի օրրիւ խոհիցըս տարտամ.  
 Անըրջոց մէջ հոգիս, արբշիռ, կը սուգէր,  
 Կամ աստղէ յաստղ լուսոյ թեւեր կը պարզէր:  
 Յետոյ դաղըէր, ու ես խօլ հուր համբուրով  
 Կը պաշտէի կիւսի մատներն հոգեթով . . . :



ԽԳ.

Փառաւորման այդ պրսակներ ինձ ի՛նչ փոյթ.  
 Եերբին ինդի ցուք մը չեն տար ճակտիս միւթ.  
 Ճառագայթումդ այդ շուրջ դէմքիս իմ տըխուր  
 ծաղը է կըծու հեգնող հէք սիրտըս թափուր:  
 Ի՞նչ է փառքը զոր չի բաժներ քաղցը հոգին,  
 ծաղկանց փունջն ոյր հոտը չըզգար Սիրելին.  
 Երբ չեմ կարող գայն իր լանջքին ձօնել գարդ,  
 Հրսւպոյր չունի՛ ինձ գեղընձայ շքեղ վարդ:  
 Լեղիս մեղմիդ մեղրածոր շիթն էր իր սէր,  
 Տաժանքներուս ընկերն էր ան անձնուէր,  
 Ու հունձքին օր հարկ է որ ան հոս չըլլայ . . .  
 Ահա՛ ինչու ցընծումին մէջ հոգիս լայ:



ՔՊ.

Հոգեհրմայ հանդէս մըն էր Հոմին մէջ,  
Թարմ շնորհաց յափշտակիչ ելեւէջ .  
Երկնից զուարթնոց դերն ստանձնած աղջկանց


սլար

Կաւետերգէր Փրկչին ծընոնողն յաշխարհ :  
Ամէնք հագած էին ըհնեզ ձիւնաթոյր,  
Հիւսուէր ոսկի թել շուրջ հերաց քաղցրաբոյր .  
Տաւոդ, քնարով կ'օրհներգէին քնքշածայն . —  
Աստղով, նուագով մի դիւթական եթեր այն :  
Ու աստեղոց մէջ ցուցլար Մաննասս սլոսպըղուն ,  
Չայնից վերել թեւածէր ձայնն իր թըրթոուն : —  
Հանուրց զմայլման Մայրիկն հաղորդ էր վերէն ...  
“Հաւատքն ինչ ոյժ,, կ'ըսէի ինձ տխրօրէն :

**ՔԿ.**

*Մաննիկս հիմայ սիրուն աղջիկ մ'է գողտրիկ,  
 Հասակ, տաղանդ մէկտեղ ամաճ գեղեցիկ:  
 Շրջանաւարտ կ'ելնէ Օննիկս այս ամստ,  
 Թէ եւ ոչ մեծ, աշխատութեամբն իւր յամստ.  
 Մայրնմանակ Շահանս, փոքրիկ իմաստուն,  
 Խորհի, գրբէ, ու կ'երգէ ալ գերդ թուշուն.  
 Ծուրհան ճգրիտ տիպս է, ինչպէս մայրն ըսէր,  
 Թիթեռնիկ մ'է, դեղին կապոյտ իւր թեւեր:  
 Մարմնով, հոգով գեղափրթիթ գաւակաց  
 Ի՛նչ հեշտանը է վէտվէտումը շուրջ ծնողաց...:*

*Ամէն խնդից պէս այս խինդն ալ կը թունէ  
 Այրի հօրը սրտին մէջ վիշտն որ հո՛ն է:*



Օր. Մաճարի Ռ. ֆերդինանդ եւ Եղբայրները՝ Օսկի, Շահան, Կոյիկան  
 Գ. ֆերդինանդ  
 1898/99 թուականը պատկերում.

**ԻԳ.**

Մեւ, մութ լընոյր լայն տաճարը այն գիշեր.  
 Եղերածայն կ'ողբերգէին դպիրներ.  
 Փուշը գլխին, վեզը ծրուած, ի խաչին  
 Առկայծ լուսով կը նշմարուէր դէմք Փրկչին:  
 Ռհ, փուշ ու խաչ, արիւնահոս քացուած վէր,  
 Ահա՛ հնչ որ հոն մարդկութիւն կը պաշտէր. —  
 Ու սրգասոյգ սիրտս հասկընար թէ ինչպէս  
 Դից Հաւատքին յաղթած էր կրօն Չոհին հեզ:  
 Յիսուսին կրօն աստուածացումն է Յաւին.  
 Իրեն կոչէ այնքան սրբոտերն որք ցաւին.  
 Աստուծոյ մը փուշերն ու վէրք ու արիւն  
 Տառապելու դասը կրնան տալ մարդուն:



**ԻԷ.**

Իմ Գողգոթաս բարձանց վրայ դաշտն է մահու,  
 Ուր կը վարուիմ՝ ցաւալըլուկ այցելու.  
 Գերեզմանաց ովկիանոս դառնալի,  
 Ուր վիհն յուզեմ՝ յոր սուգաւ իմն պաշտելի:  
 Գամուած վշտի խաչափայտին, անդ, երկա՛ր  
 Հալամդուկ խօսիմ՝ իրեն, հէք յիմար. —  
 Սրտասառոյց մարմար-լուծի՛ն մտելոց. —  
 Հովին միայն սուլէ վայինն ողբակոծ:  
 Չինք, իմ՝ արթուն ու քուն ժամնոցս ընկեր,  
 Սեւ ամայեաց մէջ փրնտըռել եմ՝ եկեր...  
 Գողգոթ մեկնիմ՝, համբոյրն առած իր հողին...  
 Հոն Գողգոթաս, հոն միշտ կ'եւնէ իմ հոգին:



**ԻԷ.**

Պուրակազեղ Հալքին էինք զիղագնաց,  
 Մարմարային մէջ հեշտին վայր սրտաբաց.  
 Շոճեաց շուքին տակ խրմբուէր հոյլ մըտերմաց,  
 Կղզիացում՝ սրտերն ալ հոժ էր սեղմած:  
 Ալեծածան շատ անուշ ժամք սահեցան,  
 Իշավարիկ քանիցս ըրինք մեծ շրջան.  
 Բոհինքիբոյէն շատ անգամներ վերջին նաւ  
 Լուսնի շողով, փրփրուին, Հալքի մեզ բերաւ...:  
 Յետոյ աշնան փրչեցին հողմք տրտմացան.  
 Կուտրած սրտով մըտերիմներ ցըրուեցան:  
 Տըխուր վերջով քաղցր օրի յուշ մը մընար: —  
 Իբր իր կեանքին պատկեր՝ յաճախ յայն դառ-  
 նար:



**ԻԹ.**

Իր հոգին ինձ մօտիկ կ'զգամ միշտ, սակայն:  
 Բացակայ մը լինել թուի ինձ միայն,  
 — Աւսնդ, ստուերց աշխարհն անդարձ տարա-  
 զիր —  
 Որ քովըդ չէ, տեսիլ մ'է, քայց չէ անիր:  
 Անէացման մտքին ըմբոստ է հոգիս.  
 Ի՞նչպէս կրնայ չըլլալ այն որ միշտ է յիս.  
 Միրտս ու խոհերս ու երագներս ինք լընու,  
 Լուսթեան մէջ մերթ ձայնն ինձ խօսի լու ի լու:  
 Այն որ այնքան սերտ հիւտուեցաւ քիմ՝ եսիս՝  
 Կրնար քակուիլ անկէ՞ ցորչափ զիտեմ՝ զիս.  
 Մէջս անընդհատ կ'ապրի ան կեանքն իր ան-  
 ցեալ,  
 Ու կը կարծեմ՝ կը համակրի մեզ դարձեալ...:



**Խ.**

“Ձերծայ մահէն, սրբէ արցունքն աչերուդ.  
Ա՛լ քուկդ եմ՝ միշտ, ա՛լ մեզ երկինք չէ ան-  
գուծ...” —

Թմբրանքիս մէջ միւթին ինձ մօտ իր ճայն գիրգ  
Մնչէր, ինչպէս սիւքին շունջ ծառոյն գիրկ:

Ու կ՛զգայի բազուկներուս մէջ թափուր  
Խայտալն իրեն, սիրատարփիկ, հուրի հուր.

Կը սարսըռա՛ր մարմինս մագին փրփուրէն,  
Խուցըս դըրախտ դարձեր շունչովս իր նորէն:

Վարանէի երանութեանս վըստահիւ,  
Բայց ինձ թուէր փայփայանքէն վիշտս հալիւ:

Անըրջազարթ, մինակ էի, սուգիս մէջ.

Ո՛ր տայր՝ երազս ի մահ յանգէր անընդմէջ:



**ԽԱ.**

Ահա էր միշտ անձս հիւանդ է, կարեվէր. —  
Իր ստուերին հաւատարիմ է իմ սէր.

Ի՛նքն ինձ պակսի, զի՛նք կը բաղձամ՝ կաթոգին.  
Ի՞նչ փոյթ ինձ այլք, ու ինք մընայ միշտ ան-  
դին . . . :

Դամբանին քով պարտի՛ դադրիւ սրտին սէր,  
Ձոր պաշտելոյն ուխտեց, անանց ու անմեռ.

Հոգեխառնուած սիրոյ կեանքին յիշատակ  
Կընայ մարիւ, վշտին այրմամբ ա՛լ եւս տաք:

Սիրոյդ հիմայ մորմոքանք մ՛ալ կ՛աւելնայ,  
Ամէն շունչիդ հառաչես “Է՞ր չապրէր նա...”

Քեզ, զինք մոռցած, այլում ժպտիլ թէ տեսնէր,  
Վախնաս՝ հոգին նախանձաբեկ զըժոմընէր...:





**ԷՔ.**

Մըտացածին լիկ ստեղծումս է հոգին  
 Մտտի սիրոյն, մըտացն յուշոյն սիրողին.  
 Ան մը փոշի միայն մընայ, ոհ, անկէ  
 Որ շինուած էր մտքէ, սէրէ, շընորհքէ:  
 Լոյսի ծարաւն ունէր անոր միտքն անյագ,  
 Հեզիկ, զոհուող սրտակէզ սէրն էր համակ.  
 Խօսքին, ձայնին, իր էութեան մէջ բոլոր  
 Գեղափայլէր երկնաբուրիկ մի շընորհ:  
 Աստուծոյ մը վրսեմ՝ երկն էր սյդ հոգին,  
 Ու թափանցիկ պատեանն անոր՝ իր մարմին:  
 Թէ վայրագ մահ ծուէն ծուէն քօղն ըրաւ,  
 Մեծ ծարուարն իր գործին խնայել չըզիցաւ ...:



**ԷԳ.**

Միւսներն անցող ծաղկի պէս են գլխիկոր,  
 Մէզով պատած արշալոյսներ տխրաթոր.  
 Չունին գըլարթ խաղն երջանիկ տըղայոց,  
 Զոր տաքցընէ մօր նայուածքին տածող բոց:  
 Եուրհամն, անգէտ իր կորստին, կ'ոստոսէ.  
 Բարեզի մէջ մայրիկն հիւանդ է գիտէ.  
 Երբ, միամիտ, «Մամօն երբ գայ», հարցընէ,  
 Զի հասկընար՝ ինձ դէմ՝ որքան անգութ է:  
 Բայց իր հոգւոյն մէջ ալ մի բան կայ լեղի,  
 Պապակ մ'անյագ մընացած նուրբ գորովի.  
 Երբ այցէ մեզ մատաղամայր կին սիրուն,  
 Գոհ, հանդարտած, կ'ելնէ նստիլ գիւրկն իսկոյն:



**Է.Դ.**

Վեհ սուլուժով կամուրջէն նաւը կղզեաց  
Ճամբայ կ'ելնէր հոժ քազմութեամբ մը ւցուած.  
Վերնայարկը աառօն մըն էր երկարող.  
— Կեանքին խինդով լի արք կանայք՝ շքեղ,

մոխ: —

Խաղաղ ծովուն կապոյտ ալին պատռելով  
Նսան յառաջէր, օրօրուելով մեղմ՝ հովով.  
Ոմանք խօսուն, այլք պիշ կային լոյծ դաշտին,  
Ուր, նագելի քոյրեր, կղզիք շարուէին:  
Գոհարներէն ծովուն մեծին հրպաւ նաւ.  
Ելնողներուն հրպարտ տողանցն սկըսաւ:  
Բազմաց կանայք կային երկշար դիմաւոր. —  
Յանկին մէջէն անցայ հոգւով վերաւոր:



**Է.Կ.**

Չըտող թռչունք գտնեն երկինք մը ջերմին.  
Մեկնող հոգիք, ինչ, հայրենիք մը շունին. —  
Անցաւորէն անդին չըկայ թէ մի կեանք,  
Ի՛նչ առեղծուած է տիեզերք, ի՛նչ մեծ պատ-  
րանք:

Ինչո՞ւ հոգին հաւտաց քարւոյն եւ յուսաց.  
Ինչո՞ւ սիրեց, հաւատարիմ՝ պարտքին մնաց.  
Խիղճը ինչ էր, ու հոգին ալ ինչ քան է  
Որ՝ նիւթէն վեր՝ շունչ, լոյս, ու սէր, ու Բան է:  
Իտէալին էր քնագը, տենչանք ու տանջանք.  
Թէ ցընորք մ'է, ո՞վ դըրաւ զայն ի մեր գանկ...  
Խորհուրդ մը կայ, քան մը երկնից խորն ան-  
քաւ,

Թէ եւ այդ մեր չըկարենայ ջնջել ցաւս:



**ԷԳ.**

Արեւը չէ որ աշխարհին լոյս կու տայ,  
 Ուրկէ Բնութիւն կեանք, զոյն ու գեղ կ'ստանայ.  
 Աստղերը չեն որ գիշերուան մէջ այնքան  
 Կընեն երկինքն հըրապուրով աննըման.  
 Գարունը չէ որ ծաղիկներ կը սըրիռէ,  
 Ու պուրակը խորհուրդներով կ'ստուերէ.  
 Թռչնոյն երգը, խոխոջն անուին, սոյլն հովին  
 Իրենցմէ չէ որ սրտահեշտ քան մ'ունին: —  
 Զահն ոյր լոյսը ամէն լոյսի է աղբիւր,  
 Ուրկէ ցայտեն էից, իրաց հըմայք թիւր,  
 Առանց որոյ մութ, անկենդան է համայն,  
 Սիրող հոգւոյն երջանկութիւնն է, ո՛հ, այն:

✠

**ԷԵ.**

Իր պատկերը հոգւոյս հանդէպ, երազուն,  
 Տենչի, յուսոյ կոհակներէն որորուն,  
 Ի հայ հաներ էի վէպը Կէօթէի, —  
 Ի՛նչ վայրկեաններ տեսլականի ու խանդի:  
 Հերմասին հետ կը քաքախէր սիրտըս զոյգ,  
 Իմ Տորոթէս էր ան, անոր պէս պարզուկ,  
 Գեղատեսիլ, ու վեհանոյշ, ու քարի,  
 Երանութեան խոստմամբք իր ծոցն համակ լի:  
 Վէպը, տըպուած, նըջանածի ձօնս եղաւ,  
 Խորհըրդաւոր վըկայ սիրոյս իմ անքաւ . . . :  
 Գօս տերեւներ, անցեալի յուշ հոգեխող,  
 Թերթըն սրդ մատանցըս տակ դառնան սար-  
 սիրող:

✠

## ԷԷ.

Տառապանքին սիրած բոյժն է մարդն յաշխարհ.

Անտես հիւէք անոր մարմնոյն մէջ տրկար

Լկանաց բոյն դընեն, ցանեն սերմ մահու,

Ու անգոր է Արուեստ՝ Յաւին դէմ հուժկու:

Հէք հիւանդը, ճիրանաց մէջ անգղ ախտին,

Կը չարչարուի, իր հետն իրեն սիրելին.

Շունչ կը խնդրեն կուրծքին ում կեանք կը  
պակսի,

Ու մարդկային հընարքն, հատած, կը կասի:

Գերբնականին միստիկ յոյսը կայ յերեր.

Ջերմ ուխտն երբեմն հրաշքի շընորհ է գրտեր...

Ու գիտունն ալ, անյաւակնտ, գլխիկոր,

Սուրբ ժամերուն կ'երթայ խոնարհ ուխտաւոր...:



## ԷԹ.

Հորիզոնէն հով մը յառնէ, խոնար, տաք.

Արշաւակի խուժէ ամպոց թուխ քանակ.

Կը խըտանան, կ'սեւնան շուտով, հոժ ու կուռ,

Երկնից ծակատ ծածկէ մըռայլ վարագոյր:

Կը թանձրանայ, կը ծանրանայ, կ'իջնէ վար,

Ճնշէ գերկիր գերդ կափարիչ մի կապար.

Անձ գոռայ այերց կամար փայլկըտուն,

Ու թօնընկէցք կը պատռեն ծոցն ամպերուն:

Յուշոյն այսպէս կ'եղնէ յիս հով մըրըկոտ,

Կուտակ կուտակ քարդուին տեսիլքըս մաղձոտ.

Մղձկուտ կուրծքիս ետին հեծքը կ'որոտայ,

Սրտիս անձրեւն աչքերէս դուրս կը պողթկայ:



ԽԵ.

Բերին կուշտը կղզին ունի մի մատուռ,  
 Ճերմակ պատով, փոքրիկ կոկիկ, ու մաքուր.  
 Երբ կերակին օր թըրթըռար իր արոյր,  
 Կը սիրէի երթալ շնչել խունկին քոյր:  
 Զաղքը է սրտիս իր մթնոլորտ սրբասուն,  
 Առատ մտնեն հոն ճաճանչներն արեւուն.  
 Մոմերն աստղեր են ցերեկի մէջ շողուն. —  
 Երկնի պատառ՝ իտէալով ողողուն:  
 Կապոյտ խունկին մէջէն ժպտի դէմք Կուսին.  
 Մաղթանք՝ զուարթնոց մեղեդիներ կը թըլին.  
 Յորդ ու հեշտին հոսի արցիւնքը աչքին . . .  
 Կարծեմ՝ ծածուկ հոն կ'աղօթէ իր հոգին:



ԽԵԱ.

Մուր վայելնով հովն ամեհի կը փռէր,  
 Թուխ ամպին ծոց կը գեռային հուր օձեր.  
 Ահեղ գոռամաք կը դըրըրդէր երկնից գունտ,  
 Զդաճիգ տազնապ համայն ընուծիւնն հանէր  
 թունդ:  
 Սեւ ու ճերմակ կատողեր էր ծով շառաչուն,  
 Ալիք ալեաց ետին փռշէր թաւալուն.  
 Պատառ պատառ սիրտ մ'էր հեւքոտ գալարուն,  
 Ու խըճին վրայ թափուէր գայրոյթն իր փըր-  
 փրուն:  
 Ամայի էր ծովափ, ծառովքն իր դողող.  
 Ինձ հիդրային յանկ էր վայրի կոծն ու գոչ.  
 Եզերց երկայնքն հեծքըս խառնած մըրըրկին,  
 Կ'երթայի հէք, ամպրոպին մէջ, միլեզին:



**ԽԲ.**

Ու կ'երագեմ մերթ երագը մեծ Յուսոյն  
 Որ անդրաշխարհ մ'աւետէ մեզ լաւագոյն:  
 Թեւաբուսիկ թեթեւ ոգի, թեւածեմ  
 Պայծառագեղ եթերաց մէջ լուսածեմ.  
 Գրտած եմ գինք. մահէն երկուքս անվըրթար,  
 Այլ եւս ոչինչ կրնայ մեր մէջ կալ պատուար:  
 Ետք անթառամ ընտանեաց փունջ ենք կազմեր,  
 Եաղ մշտերան կեանքի հեղու մեզ անդ սէր.  
 Ու կը ժպտինք միմեանց անհուն ժրպիտով,  
 Ժիւածան զոր հին ցողք երփնեն քիւր մարգար-  
 տով:

Ամբոսաբոյր մեր շունչ սընհնդ իրարու ...  
 Բայց էր երագս ընդհատի. վիշտըս ինչո՞ւ ...:



**ԽԳ.**

Ընտանիքին գերագանց ժամն է գիշեր,  
 Խորհրդաւոր ջուն եղանակն ալ ծըմեռ.  
 Մութին՝ անոր աստղն ալ վառ հուրք մը ցայտէ,  
 Օձախին քոց ցուրտին ալ հեշտ ծարձատէ:  
 Հոծ, սիրայեռ, հոգւոց մանեակ, կ'ուրի պսակ  
 Ընտանեկան, սեղանին շուրջ, ճրագին տակ.  
 Կը փոթորկի երբոր դուրսը ձիւնին քուք,  
 Թոնիրն իր շուրջ սեղմէ սրտերը տաքուկ:  
 Զմիւն գիշեր, կրկնահրապոյր, անշուշտ դիւ  
 Տան քաղցրութեան քարոզն եղար, դասն ազ-  
 դու:

Բայց ուր պակսի մայրը քոյնին, հ՛հ. այն տեղ  
 Գիշերն ալ սեւ է, ձմեռն ալ սառ, ալ անեղ...:



**ԽԿ.**

Եղաւ ատեն ուր նըջանիկ էի ես,  
 Ուր ինծի հետ, իմ քով կ'ապրէր անձիս կէս,  
 Ուր ցերեկի նըման ինծի ցայգ լոյս էր,  
 Ինչպէս հիմայ օրերս մութ են զերդ գիշեր:  
 Ոսկի թիթոսանց պէս թըռէին ժամք թեթեւ,  
 Կենաց ուղին կ'երթայինք մենք թեւ ի թեւ.  
 Ճամբուն վըրայ Սէր մեզ վարդեր կը ցանէր,  
 Ու կ'անուշնար փուշ, չէր խոցեր մեր ոտներ:  
 Լոյսն աւօտին միմեանց աչքէն մեզ ծագէր.  
 Մեր շրթանց վրայ կեանք մի երկձայն նըլագ  
 էր . . . :

Բայց ո՞ր են քու երգերդ ուրախ օրերու. —  
 Ցաւն, որ փորէ, ան լոկ ազօս կը թողու:



**ԽԿ.**

Պարտքը խոժոռ, Սէրը ժպտուն, հոս, մարդուն  
 Եղան ընկերքն ըլլաւ կեանքի սեպ ուղոյն:  
 Մին, մատն յառաջ, ցոյց տայ վաստակը  
 բեղուն,  
 Բարին զոր պէտք է բուսցընէ քերտ ճակտուն.  
 Միւսը դիւրէ դժուարուտ ելքը ճամբուն,  
 Խրախոյս կարդայ՝ երբոր ոգիքն են թատուն,  
 Զի աշխատողն ալ, ո՞հ, նըման է տըղուն  
 Որոյ ճիշեր կընոջ երգով կը ցածնուն:  
 Առանց պարտքին կ'երթայ մարդը մուրդուն  
 Կամ՝ կը կասի հարցընելով մութ «ինչո՞ւ»,ն.  
 Երբ սիրերգու չ'երթար ոգին առ երի,  
 Կըթոտ քայլին տակ գետինը կ'երերի:



**ԽԳ.**

Մարդը, հիւլէ անհունութեան մէջ անբաւ,  
Կընտրէ բարին ու չարն, արդարն՝ անհրաւ,  
Ու որ անհուն տիեզերքը լոյս բերաւ՝  
Իրան ու լաւ այն ընտրել չէ՞ կարող ընաւ:  
Ալա մարդն իսկ է աստուած մ' իր մեծ հոգով,  
Բարւոյն տեսլով, լաւագունին վեր կիրքով:  
Այլ էր կ'զգայ ձեռք հրգօրի քան զինք վեր,  
Որուն առջեւ կը խոնարհի գլուխն յերեր.  
Ինչ որ իր մէջ մեծ է, ազնիւ ու վրսեմ՝  
Կզգայ բարձրէն հոսիւ, համեւ յերկնից սեմ,  
Ու, ամպերէն խուժող շանթին տակ ջախջախ,  
Խեղճ իւր Բան կոչել երկինքը խարդախ . . . :





« Ազգային գրադարան



NL0357221

51070

